

ՊՐԵՍՏԱՆԻՔ

ՊՈՒԼԿԱՐԻԱ

Տարեկան 12 ծր.

Վեցամսեայ 6 ծր.

ԱՐՏԱՍՍԱԶՄԱՆ

Երկու քիւր մէկ ծրարով

Տարեկան ... 14 ծր.

Վեցամսեայ ... 7 ծր.


ԱՍԵՐԻԿԱ

Տարեկան 2.60 Տօլար

Վեցամսեայ 1.50 »

ԿԱՆԵՆԻԿ

Թրակոնցական ողբ
20 սանթիմ



ԼՐԱԳԻՐ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏՈՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ՉՈՐԵՔԻՇԱՐԹԻ ԵՒ ՇԱՐԱՐ

Redaction du journal
"Irayounek"
VARNA (Bulgarie)
Редакция
на ВѢСТНИКЪ
Иравуникъ
ВАРНА
Գրողները եւ լեւ
տրողը

ԹՐԲԱՅՈՑ ՏԱԳՆԱՊԸ

Մինչ կողկասի մէջ հայ ազգաբնակիչները վիճակը վրդովիչ ըլլալէ չէ գաղթած, ապա թուրքիոյ հայութիւնն ալ նոր ջարդեր սարքուելու երկիւղով կը տագնապի :

Պոլսէն հեռագր. գործակալութեանց և թղթակիցներու եւրոպական մամուլին հաղորդած հեռագրաւորները չափէ դուրս վերջովեալ վիճակ մը ցոյց կուտան թէ՛ Պոլիս և թէ՛ գաւառներէ ու մանց մէջ : Եւրոպի մէջ հաստատուած դաւադրութեանց քննիչ յանձնախումբը՝ որ խորամանկ Սուրիացի կաթողիկի մը—Նէճիպ Մէլհամէ— առաջնորդութեամբ կը գործէ, ամէն օր դաւադրութեան մէջ մէկ հետք գտնել կը յաջողի : Ասկէ առաջ Զմիւռնիա և Պոլիս գտնուած ուժանակներէն և ռուսներէն զատ, ըստ նորագոյն լուրերու, Մանիսայի մէջ ալ 18 ռուսներ գտնուած են Յովհաննէս անունով հայու մը տունէ և այս պատճառաւ Զմիւռնիոյ նահանգին մէջ շատեր ձերբակալուած և շատեր ալ իրենց ծննդավայրերը շրջապատ են : Նոյնպէս Պոլսոյ Բերայի թաղին մէջ տան մը ջրհորէն հանուած են շիշերու կամ պտուկներու մէջ զետեղուած պայթուցիկ նիւթեր և 15 ռուսներ : ասոնք ալ շատ մը նոր ձերբակալութեանց առիթ տուած են : Կրկին Բերայի մէջ գերմանական պանդոկ մը պաշարուած ու հոն եօթը կասկածելի օտարահպատակներ ձերբակալուած են, որոնք կը կարծուի եղբի թէ, մասնակցութիւն ունին հայկական անիշխանական (?) դաւադրութեանց :

Վերջապէս այս բոլոր գիտեցողքը և ձերբակալութիւնները՝ որոնք իրական կամ երեւակայական դաւադրութեան մը հետքերը ցոյց կուտան, հայութեան, հայ ազգին կը վերագրուին, եւ հայ անունը կասկածելի ու վրտանգաւոր կը նկատուի ընդհանրապէս : Եւ այս չլուկները տարածուելով խաւամ ամբոխին

խաւերուն մէջ, ասոր ատելութիւնը ու վրէժխնդրութիւնը կը բորբոքի հայերու ամբողջին դէմ անխորի : Ակռաներ կը սրուին, կոտորածի սպառնալիքներ կը լսուին ամեն օր և ամեն տեղ :

Թուրքիոյ Հայոց այս երկիւղալի կացութեան իբր դարման, Պոլսոյ հայ եկեղեցական դասը ստիպուել է դէպի Սուլթանը հաւատարմութեան նոր երաշխիքներ տալ : Ինչպէս կը հաստատուի նոյնիսկ մայրաքաղաքի հայ թերթերէն, Օրմանեան պատրիարքը անցեալ չորեքշաբթի օր հաւատարմական և բաւանհաստակութեան ուղերձ մը մատուցած է Սուլթանին : Բայց միայն պատրիարքարանի կողմէ մատուցուած ուղերձ մը կերպաւ թէ նշանակութիւն չէ ունեցեր : Եւրոպի մէջ, ուստի հարկ եղբի է Պոլիս գտնուող բոլոր եպիսկոպոսներէ ստորագրուած ուրիշ ուղերձ մըն ալ մատուցանել : և շաբաթ օր Պատրիարքը իր հետ ունենալով ծանօթ երկու թղթատէր արքեպիսկոպոսները, Բարթողիմէոս և Մեսրոպ, եւրոպա գացած և Սուլթան Համիտի ոտքերուն առջեւ դրած է 11 եպիսկոպոսներէ ստորագրուած հաւատարմական և թախանձալից ուղերձ մըն ալ :

Դեռ բոլորը այս չէ : Նոյն եպիսկոպոսներուն կողմէ ուրիշ գրութիւն մըն ալ Ամենայն Հայոց Հայրապետին շրջապատէ և Որմէ կը խնդրեն որ միջամտէ եւրոպայի և Ամերիկայի մէջ գրտնուող հայ յեղափոխ. կազմակերպութիւններուն դադարեցնելու համար դաւադրական և յեղափոխական գործողութիւնները :

Խնդիր է թէ՛ 1) Վեհ. Կաթողիկոսը այստեսակ միջամտութիւն մը յանձն պիտի առնէ : 2) Կաթողիկոսին միջամտութիւնը ո՞ր աստիճան ազդեցութիւն պիտի ունենայ յեղափոխական կազմակերպութեանց վրայ :

Բնաւ կասկած չը վերցնենք թէ Կաթողիկոսը ոչ թէ կոտորած ալ

նոյնիսկ կաթիլ մը հայու արիւն ի զուր թափուիլ չուզեր, եկը մտածէ վերահաս կոտորածի մը առջեւ առնելու համար ամէն աշխատանք յանձն առնել : Նա գիտէ թէ՛ իր առաջին միջամտութեան պատասխանը հայ յեղափոխականներու կողմէ պիտի ըլլայ Սուլթանին ընդդէմ ըստ իր բարեւոքութեան ցածրագիւրնեւ ճշգիւ գործադրութեան մասին նախ ապահովութիւն ստանալ :

—Ո՞վ պիտի տայ այս ապահովութիւնը : Սուլթանը. Բ. Դո՛ւռը, Կարեւի՞ է վստահիլ ասոնց խոստումներուն ու տալիք ապահովութիւններուն :

Կը կարծենք թէ Վեհ. Կաթողիկոսին կը քնայ միակ ճամբայ մը : այն է հայ յեղափոխական կազմակերպութեանց և թուրք կառավարութեան միջեւ տասնեակ տարիներէ ի վեր սկսած այս պայքարին ծնունդ տուող միակ խնդիրը—հայկական նահանգներու բարենորոգման խնդիրը—նեղկայացնել Խաղաղութեան միջադպրոյն Բ. Համաժողովին, որ, որոշ նշաններ կան թէ, քանի մը ամիսէն պիտի գումարուի նախաձեռնութեամբ Մ. Ռուզվէլթի :

Կը սիրենք հաւատալ թէ այս առաջադրութեամբ և խոստումով Կաթողիկոսին միջամտութիւնը կրնայ սա արդիւնքը ունենալ որ մինչեւ Խաղաղութեան Համաժողովին գումարումը հայ յեղափ. կազմակերպութիւնները իրենց գործողութիւնները դադարեցնեն :

ՊԱԳՈՒԻ ՎԻՃԱԿԸ

ԲԱԳՈՒ, 29 օգոստոսի

Ամսիս 19-ից մինչեւ օրս փակուած նստածիմ ընտանիքս հանգրձ չողենաւ : Դրութիւնն անտանելի է, ներկարգել անկարելի է : Տասնեակ հազարաւոր գործաւորներ անտուն, անտեղ, առանց հացի ու ջրի մնացել

են փողոցում կամ լցուել են քրիստոնեայ տներէ բակերում : Մի քանի տասնեակ տներ, հանդերձ անային իրեզներով եւ մէջն ապրող մարդկանցով կրակի են մատնուած : Բաւախանին եւ Բիբի-Էյրաթն ամբողջովն այրուած են : Բազուի վնասը մի քանի հարիւր միլիոններէ հասնում : Բոլոր խանութները փակ են, ուսուցիչները դժուար է գտնուում : հացը մի քանի օր առաջ ֆունտը 15 կոպէկ էր, այսօր շնորհիւ նահանգապետի կարգադրութեան մի փոքր էժանացաւ : Բաղաքային ջրանցքը՝ որ իւր սկիզբն առնում է թրքական գիւղերից, փչացած է : Բաղաքը բաժանուած է երկու մասերի՝ թրքական եւ հայկական : Փողոցներում մանգալ անկարելի է : Հրամայուած է ուժակոծել այն տները, որտեղից հրացան կամ ատրճանակ տրճակուի : Անդեալ օրը ուրակոծեցին մի հարուստ թուրքի տուն : Բարակոծումից կրակ առաջացաւ եւ ամբողջովն այրուեց տունը : Ահա երկու օրէ, որ դադարել է հրացանաձգութիւնը, գիւղերը թրքական թաղերում հրացանի հատ ու կէտ ձայներ են լսուում : Թուրքերը, իմանալով որ հրացանաձգութիւնից կարող են ուժակոծուել իրենց տները, այժմ գիմել են այլ միջոցներ : այն մարդկանց, որոնց պատահում են իրենց թաղերում կամ, ինչպէս ասում են թէ չէ՝ սպանում են դաշոյնով : Հայերից սպանուածները համեմատաբար աւելի քիչ են թուրքերից : Իսկ նիւթակտնապէս հայեր կրած վնասը անհաշիւ է : 25 ից աւելի հայերի տներն այրուած, մէջն եղած—չեղածով, շատերի տէրերը մորթուած են հէնց իրենց տներում : Նահանգապետի հրամանները ճշտութեամբ չեն կատարուում, ոստիկանութիւնը ամեն մի դէպք յեղաշրջում է եւ այնպէս ներկայացնում ընդհ. —նահանգապետին յօդուած թուրքերի : Օրը ցերեկով տներն կողոպտում, կողոպտուած իրերը տեղափոխում եւ այլն, ոստիկանութիւնը ականատես է մնում միայն, երբեմն ապրանքատէրերը մատնացոյց են անում իրենց սեպհակաւութեան վրայ օգնութիւնն խնդրում, որ յետառնեն եւ վերագործեն, բայց ներանց խնդիրը մնում է անհետեւանք :

Անտանիլի է այլեւս այստեղ ապրելը : Երկաթէ առողջութիւն է հարկաւոր եւ քարէսիրտ որ մարդ կարողանայ այս ամենը տանել, առանց հիւանդանալու : մարդ անգգայ պէտք է լինի, բարոյապէս փչացած լինի, որ այս ամենը տեսնի եւ չարտասուի : Ծերունի, դառամաւ կանայք, կորցրած իւրեանց որդից՝ ծուկը ծնծն :

լով. աղերսանքով, արտառուածոր աշխարհով փնտռում են իրենց որդոց եւ այլն : Թէ ինչով կը վերջանայ այս բոլորը. այդ միմայն Աստուծունէ յայտնի : Հաշտութիւնը այլեւս անկարելի է, որովհետեւ թուրք խռովանքն՝ այլեւս հաւատարմութիւն չէ : Այս գրութեան մի եւթ տալը մնացել է իշխանութեան վերայ, իսկ թէ նա ի՞նչ կանի, այդէլ, եթէ չենք մեռնիլ կը տեսնենք : Մոռացայ աւելացնել. որ քաղի հայերից բաւականաչափ փառաւոր են եւ տարազգիներ, որ, անգլիացի ֆրանսագի եւ ռուս նաւթարդիւնաբերողներ, Բագուն պատահած զգաղգութիւնը պէտք է համարել ընդհանուր ռուսական եւս, նաւթ եւ նաւթի մնացորդ չկան բառիս լայն նշանակութեամբ, եթէ այսպէս երկար շարունակուելու, լինի ամբողջ ռուսական երկաթուղիների 2/3 մասը կանգ կաննի վառելիք չունենալու պատճառաւ. նոյնպէս եւ կասպեան ու վոլգայի նաւագը նացրութիւնը : Ամեն օր նաւթարդիւնաբերողներն ընդհանուր ժողով է լինում :

«ՆՈՐ-ԴԱՐ»

ԿՈՎԿԱՍԵԱՆ ԼՈՒՐԵՐ

ՏՓՂԻՍ 19 սեպտ. — Պագուի ընդհ. կառավարիչը կը տեղեկագրէ թէ այլեւս քաղաքին մէջ խռովութիւն չը կայ, բայց Պագուի զանազան կէտերուն մէջ տեղի կունենան յարձակումներ եւ սպանութիւններ :

Փոխարքան Կոթի եւ Տօնչէի գաւառները զինուորական վարչութեան տակ դրաւ : Զօրաց հրամանատարութիւնը եւ մասնաւոր իրաւասութիւններ տուաւ գնդապետ Ալֆրէտին այդ գաւառներու մէջ կարգը վերահաստատելու համար :

Զօրքեր շրկուեցան Զէրնոմասքի, Շուլալէսի, Շամախ եւ Նուխա : (Հաւաս)

ՏՓՂԻՍ 19 սեպտ. — Եղիսաբէթուպօլի նահանգին մէջ, մասնաւոր Աղտամի ճամբուն վրայ աւազակութիւնը տարածուած է. զօրավար Թաքաչլիի զօրքով Աղտամ հասաւ : Թաքաչլիի խուճը մը խաղախներէն հալածուեցաւ մինչեւ հոյ վանք մը Երեւանի նահանգին մէջ եւ հոն պաշարուեցաւ, երբ իսլամական օգնութիւններ հասան զայն ազատեցին :

ՕՏԵՍԱ 19 սեպտ. — Իշխան Նաբոլէօնի վրայ, գնդակ մը արձակուեցաւ, այն պահուն երբ սա կը սպասէր որ Զարէն ընդունուի Զարեքէ Սէլօին մէջ : Իշխանը չը փախուեցաւ : Դէպքին հեղինակը կրցաւ փախչիլ :

ԲէթէրՍՊՈՒԻԻ 20 սեպտ. — Լուի Նաբոլէօնի Կովկասի կառավարիչ անուանումը դեռ չը վաւերացուեցաւ Զարէն :

ԲԱՐԻԶ 20 սեպտ. — Բեդերսպուրկէն ստացուած մասնաւոր հեռագիրներու նայելով, մտաւորաւ է որ ամբողջ Ռուսիոյ մէջ պաշարման վիճակ հրատարակուի :

ՏՓՂԻՍ 21 սեպտ. — Ռուս հեռագր. գործակալութիւնը կը հաղորդէ թէ Թաքաչլիի յարձակեցան Շամախի Հայոց թաղին վրայ :

ՊԱԳՈՒ 21 սեպտ. — Ոստիկանութիւնը գտաւ գաղտնի միջոցներ մը զէնքեր եւ հրանքներ, որոնք Պարսկաստանէ բերուած են :

ԸՆՏԻՐ ՄՏՔԵՐ

— Յիշողութիւնը իմաստութեան թղթապանակն է :

— Մէկը մոռնալ ուզելը կը նշանակէ թէ անոր վրայ կը մըտածես :

— Միայն մէկ ուրախութիւն կայ. այն ալ գալիքն է :

— Միամտութիւնը չափ անգամ ամենամեծ խելացութիւնն է :

— Մարդ միշտ կը յիշէ այն ինչ որ մոռնալ կուզէ :

— Չափազանց պծնասիրութիւնը ստոր բնաւորութեան ապացոյցն է յաճախ :

— Առաջին սխալը ուրիշ սըխալի մը կառաջնորդէ :

— Եթէ խօսքը արծաթ արժէ, գործը ոսկի կարժէ :

— Յիշատակը խիստ դառն տագնապի վայրկեաններ ունի :

ՕՁ ԳԻՆԻՆ ՔԱՐԲ ՕՂԻՆ

— 5 —

[Շար. նախորդ թիւէն եւ վերջ]

Ալթուրմոլին կրած իմացական ու բարոյական չարքները անհամար են : Ալթուր աւազակը կը յափշտակէ մեր ԲԱՆԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ — ՍԱՏՈՒԱԾՈՒԹԻՒՆԸ, որովհետեւ իւրին է դեկը կեանքին, զէնքը կենաց պայծառն : Ալթուր ԿԱՐԲԻ ԱԶԱՏՈՒԹԻՒՆԸ ուրանալով՝ մեզ կը ստրկացնէ, բարոյական էակ ըլլալէ կը դադրինք. անասուն կը դառնանք, խաղալիք մեր կրից : Գինովին վաճառութիւնը դաշինքը, կտակը վաւերական չեն օրէնքին առջեւ. գինովը ՄԱՐԴԻ չէ այլեւս, այլ Միմոս, որուն արժանապատուութիւնը ցնխեցուց մէջ թաթխուած է. գաղտնիք չունի ան, անպարտապաշտ մէջ : Յոռի անորոշակը բռնապետն է իր կամքին որ գերիշխանն ըլլալու էր իր կեանքին : Ալթուրմոլը գիտակցօրէն դժոխք կը դիմէ :

Ալթուրմոլը կը մարէ ԽՂԻՆ ԼՈՅՍԸ որ բարոյական կենաց աստղն է : Երբ մարած է այս լոյսն անասնական կիրքերն կը գերազգուցին իրենց հրէշութիւններն կատարելու : Անասնականութիւն ու ոճիւր ընկան կը դառնան գինովին փորձութիւն ու մոլութիւն մեղրի պէս անուշ կը թուին : Հրապառ երեւակայութիւնը երեւակայ կը մղէ խիզախ ու գահավէժ գործերու : Ալթուր բարոյական թմբեցուցիչ մէջ, ծանծաղուտը անբարոյութեան : Ալթուր նենգամիտ խաբարայ մը ըլլալով՝ մեղրի ըրպէական հաճոյքին փոխարէն տալիքներու տառապանքը կուտայ : Գինով գիշերներու ծշուտ առաւօտներ կը յաջորդեն : Հարուստ գինովը չը քաւոր, աղնուականը ստրուկ, իշխանը մուրացկան կըլլայ :

Ուրեմն, ԱԼԹՈՒԸ ԻՆՔԵԱՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ :

Անհատական փաստները պիտի չըմեն զանալին թերեւս, եթէ ընկերային չարքները աւելի ծանրակշիռ չըլլային :

Ալթուր ընտանիքին դահիճն է, իր

ետեւէն չքաւորութեան, մուրացկանութեան ու քրոնիկ հիւանդութեանց ճիւղերը կը սպրդին տան մէջ անոր անդամները յօշոտելու : Ալթուրմոլը արժանաւորապէս չկրնար կրթութիւնը զաւակները որով անոնք ընկերութեան ստորին խաւը կազմելու կը դատապարտուին. ան իր նախահարց հարստութիւնը կը փճացնէ ու փառքը ամօթի կը փոխէ : Ազնուական գերդաստանի մը անկուծը ի՞նչ եղբրական է . . . : Ժպիտը բացակայ է գինովին տան մէջ ու արցունքը ներկայ : Մայրը դաւկին ծննդեան օրը, կինը պատկօրնէքի ժամը կ'անիծէ, զաւակները կը նզովեն բազըր :

Գինովը զաւակաց գայթակղութեան քարն է, որուն վրայ իշխալով կը փրստորին Գինովին ընտանիքը գինետուն մէջ՝ բուժարան անիծից, սըրտահատորներուն տանջարան : Գինովին կտակը անէծք է սերունդին, այլօրը սաղմին ժառանգական յոռի տրամադրութիւններ կը փոխանծէ : Ոճիւր չէ՞ հօր մը համար անէծք կտակել իր զաւակաց, ինք՝ որ անոնց ԵՐԿՐԱՒՈՐ ՆԱԽԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ըլլալու սահմանուած է : Գինովին դրացիներն իսկ անհանգիստ են, շարունակ դժոխային տեսարաններու հանդիսատեսներն են : Թաղը փրկելու համար գինովը խեցեվճիւր ընելու է : Գինով հայր մը զաւակ ունենալու արժանիքը չունի, ոչ ալ գինով եւերիտասարդը կին ունենալու իրաւունքը :

Ալթուրին ընկերական չարքները բազմաճղի են : Գինետունութիւնը ժողովուրդներու քառիկն քաւարանն է : Համայնքի եկեղեցիներն ու զրպարոցներն բաղձալի վիճակի պիտի հասնէին եթէ այս մոլութեանց յատկացուած դրամը իրենց տրուէր : Նոյն դրամը ապահովագրութեան յատկացուած՝ ընտանիքներու ապագան պիտի ապահովէր, որուն այնքան անձկալի է խղճամիտ հայր մը :

Գինովութիւնը ազգի մը գոյութեան անհրաժեշտ հանրային պաշտօնները կը հեղնէ : Հանրային պաշտօնեայ մը իրաւունք չունի ալթուր գործածելու : Խղճամիտ ու լուսավոր մարդերը միայն արժանի են այդ վսեմ ու փափուկ պաշտօններուն . քանի որ այլօրի սիրահար մը պղտորելով իր միտքն ու խիղճը զեղծումներ միայն պիտի գործէր : Գինով վարիչն ու դատաւորը պատուհաս են ընկերութեան, ուսուցիչն ու քահանան ոճրագործ :

Ընկերային զուարճութիւնները աւելի վայելչօրէն կրնան կատարուել առանց ալթուրի : Աւելի կարգ ու սարք, հաժ ու հոտ կայ այն հարստանքներուն մէջ ուր գինին կը բացակայ : Գաւաթին վրայ կարգացուած օրհնութիւնները օճը չեն կրնար թողել :

Գինետունները անբարոյութեան բուժարաններ են եւ քաղաքակրթութեան ու կրօնի ռիսիկի թշնամիներ : Սոսկանք գինետուններէ . . . : Անոնք ազգի մը գերեզմանը կը փորեն : Բարեկոն ու Հովիտ գինիի զաւաթին մէջ լուծուեցան . . . : Արեւոյնութիւնը հաճոյամոլութեան սէրը կը զօրացնէ, որ ազգի մը կործանման ամենակարգի ճամբան է : Կը մարէ աշխատութեան ու պարտականութեան իղձերը որոնք ժողովուրդներու յառաջդիմութեան գրաւականներն են : Զգաստարաններու եւ բանտերու վիճակագրութիւնները կը ցուցնեն թէ արեւոյնութիւնը մայր է ոճրագործութեանց, դաշնակից մոլութեանց :

Ալթուր ցեղը վատասեղծով՝ սեւրունդներու ապագան սաղմէն կանցնէ. ընկերութեան մուր քասակարգը աւելցնելով՝ աղքատախնամի կնճիռները կը չինէ : Սերունդի մը մոլութիւնը երկրորդին տկարութիւնը ու երրորդին ճակատագիրը կըլլայ :

Արեւոյնութիւնը ներքին խռովութեանց ու արտաքին պատերազմներու զրգիւ կըլլայ, միջազգային կնճիռներ իսկ չինելով :

Հանրային գինետունութիւնը Հիմնական մէջ Հարկ է դարձնել գտնել այս փտախտին : Աշխարհի չարքները հըրաշքով չեն դարձանուիր այլ մեթոտաւոր եւ մասնաւոր ջանքերով ժամանակն է այս վէրքերուն փանաւնն :

Արեւոյնութեան դարձաններն այս առիթներուն նման բազմաթիւ են : Իրտակցութիւնն է լաւագոյն սպեղանին այս վէրքին, գիտակցութիւն ու փրկութիւն հոսանիլ են : Գիտակից մարդը մտածուածով կը վարէ գործերը հեռատեսիլով ապագան . հեռատեսիլութիւնը կը փշրէ գինիին զաւաթը : Մտքի ու խղճի լուսաւորութիւնն է գիտակցութեան մայրը, եւ լուսաւորութեան ազդակներն են բնմ, զպրոց եւ մամուլ :

Արեւոյնութեան դառն փորձառութիւնը կուշաբերէ զգայնիկ արժանապատուութիւնները : Նպատակի կուսակցութիւնը երիտասարդը գինետունէն կը հեռացնէ : Բարի օրինակը պերճախօս է քան հրեշտակաց լեզուն : Քահանայ ու ուսուցիչ, ծընող ու ազնուական հանրութեան փրկիչներ կրնան ըլլալ, պայմանաւ որ հրաժարին յայս թունաւոր ըմպելիէն : Մեծ մարդեր միշտ չեն իյնար կամ կանգնիր, իրենց ետեւէն լէգէոններ կը քաշեն :

Գինետունն ու արուեստի ուր գինետունութեան ազդու դեր չէ փոխան կազմուածնէ մեր ճաշակը որով ինքնաբերաբար ստորին միտումները կը մեռնին մեր մէջ : Լսարան, դրադարան, նաւագահանդէս, նկարասրահ ճաշակը նրբացնելու գերընտիր միջոցներ են : Գործնական քարոզները եւ օգտակար գրքերու ժողովուրդականացումը իր բարիբաւ ազդեցութիւնը ունի այս մասին : Գործաւորաց անտեսական կեանքին բարւոյնքումը եւ ընկեցիկ որբերու ձրի կրթութիւնը չարքին ալը կը ցամքեցնէ : Գինետունից ընկերակցութիւնները փրկութեան բանակներ են : Կանանց գինետունից գնահատելի ծառայութիւններ կը մատուցանեն : Կինները նախանձախնդիր ընտանեկան, սրբութեան ու երկանկութեան զօրաւոր պայքար մը մղելու են արական սեռի այս մոլութեան դէմ, որպէսզի անով իգական սեռն ալ չի վարակուի : Բժիշկներն իրենց բարի օրինակով ու յորդորներով լաւ գործ մը կրնան տեսնել ի նպաստ ժուժկալութեան, իրենց խօսքերը կշռաւոր են :

Դպրոցներու գինետունիցը նոր սերունդը գրեթէ փրկած է : Գինով ուսեալը էն ծաղրելի միմոսն է, կղերը քաղաքութիւն սեպելով : Զգաստարանները գինովը կը դարձան իբր հիւանդ : Պետութեան ալթուրի դէմ գծած սեղմ օրէնքները թուումը կը ցուցնեն կանգնել այս մեթոտաւոր դէմ : Ոստիկանութիւնը հանրային խայտառակ ցոյցերը կարգիլէ : Հասարակաց կարծիքը մեծ ազդեցութիւն ունի պայմանաւ որ ընկերութեան ՊԱՏՈՒԱԽՈՐ ԴԱՍԱԿԱՐԳԸ գինետունից ըլլայ : Կրօնի ազդեցութիւնը անուրանալի է հաւատաց-

եայնեքու համար ինքնավարութիւնը լաւագոյն դարձան է սկսեալներու ու ԶՄԿՍԻԼԸ փրկութեան ապահովագոյն մեթոտը ամենուն : Գինեմը սերով բուժելու է, սէրը հրաշագործ սպեղանի մէջ : քննադատութեան նշարակը անփորձներու ձեռքին մէջ կրնայ խորունկցնել վէրքը :

Ամէն մարդ բարեկամն է օձ գինիին կամ թնամին քարը օղիին : չէզոք գետին չկայ : Իւրաքանչիւր անհատի գործէն կախեալ են իր ու ընկերութեան կենսական շահերը : Պերճախօս իրողութիւններ կը դատապարտեն ալքօլը : ասոնց հանգէպ ինչ ըլլալու է ձեր գիրքը, ազնիւ ընթերցող, իմ խոնարհ ստորագրութիւնս պիտի ըլլար . . .

ՀԱՄԸ ՄԻ ԱՌՆԵՐ

«ԼՈՅՍ»

ԱՅԼ ԵՒ ԱՅԼ Ք

Լոյս Ռեփրաքըր 1905—1906 ի համար նոր հրատարակուած հատորը հետեւեալ ցուցակը կուտայ զանազան պետութեանց վաճառքարձ նաւատորմի խորհուրդի տարողութեան մասին, առաջատանաւններն ալ միատեղ հաշուելով :

Մեծն Բրիտանիա եւ Իռլանդ	17,009,720	թօնօ
Մ. Ն. Ամերիկայի	3,996,479	»
Գերմանիա	3,564,798	»
Նորվեգիա	1,776,218	»
Ֆրանսա	1,728,938	»
Իտալիա	1,186,066	»
Ճաբոն	878,552	»
Ռուսիա	862,909	»
Շուէտ	804,346	»
Սպանիա	731,581	»
Ստորին-Նահանգք	701,754	»
Ճանիմարգա	626,512	»
Աւստրո-Հունգարիա	618,194	»

Վերի թիւերը ցոյց կուտան թէ 12 պետութեանց ունեցած փոխադրանաւերու տարողութեան գումարը հազիւ Անգլիոյ վաճառքարձ տորմիդներու տարողութեանը կը հաւասարի :

ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՆԳԼԻՈՅ

Անգլիական կառավարութիւնը հրատարակեց 300 էջերէ բաղկացեալ գիրք մը, որ Միացեալ-Թագաւորութեան վերջին 15 տարիներու վիճակը ցոյց կուտայ բազմաթիւ վիճակագրական ցուցակներով :

Ահաւաճիկ 1890 էն ասդին ծախքերու գումարները

Տարի	ամբողջ ծախք	գին. ծախք
1890-91	75,901,000	33,371,000
1892-93	78,272,929	33,265,000
1894-95	81,785,000	35,143,000
1896-97	88,619,000	40,376,000
1898-99	94,115,000	43,996,000
1900-01	167,981,000	121,044,000
1902-03	168,304,000	110,844,000
1904-05	125,251,000	64,967,000

Այս ցուցակէն կը տեսնուի թէ Անգլիա այսօր կրկնապատկած է իր զինուորական ծախքը քան ինչ որ էր 10-12 տարի առաջ : Թէեւ 1901 էն մինչեւ 1903 շատ աւելի ծախսած է, բայց այդ թրանսպարի պատերազմին պատճառաւ ըլլալուն համար բաղդատութեան չէ կարելի դնել :

Գալուց Անգլիոյ բնակչաց թիւին հետեւեալ կարճ ցուցակները երկար խորհրդածութեան առարկայ կարող են ըլլալ :

Միացեալ Թագաւորութեան բնակչութիւնը .

1890 ին	37,484,764
1900 ին	41,152,471
1905 ին	43,217,687

ԱՆԳԼԻՈՅ ԵՒ ԿԱԼԷՍԻ ԵՐԿԻՐՆ

1890 ին	28,763,673	բնակիչ
1900 ին	32,249,187	»
1905 ին	31,152,977	»

ՍԿՈՎՏԻԱ

1890 ին	4,003,132	բնակիչ
1900 ին	4,436,958	»
1905 ին	4,676,603	»

ԻՌԼԱՆՏԱ

1890 ին	4,717,959	բնակիչ
1900 ին	4,466,326	»
1905 ին	4,388,107	»

Գլխաւորապէս ուշադրութեան արժանի կէտը այն է թէ մինչ Անգլիոյ եւ Սկոտլանդի բնակիչները կաւելնան, ասդին իր բռնարարուած իրաւունքներուն համար պայքարող Իռլանտի բնակիչները կը պակսին հետզհետէ, այնպէս որ եթէ այս վիճակը շարունակէ օր մը Իռլանտացիք բոլորովին պիտի անհետանան :

Ամբողջ Միացեալ-Թագաւորութեան մէջ ծնունդը սգալապէս կը նուազի . 1890 ին 1000 ին 29.2 ծնունդ կար, իսկ այսօր 1000 ին 27.6 կը հաշուուի : Բայց պէտք է անմիջապէս աւելցնել թէ մահն ալ կը նուազի . 1890 ին 1000 էն 19.4 կը մեռնէին, իսկ 1904 ին 1000 էն 16.5 մեռած են . ուստի դեռ տարին կէս միլիոն բնակիչ կաւելնայ :

ՌՈՒՍ-ՃԱՐՈՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ

ԿՈՐՈՒՍՏԵՆԵՐԸ

Պատերազմն սկսաւ 1904 փետր. 8ին, եւ տեւեց 527 օր :

Ռուսիոյ ծախքը կը հաշուուի	Տօլար. 1,875,000
Ճաբոնի ծախքը կը հաշուուի	» 1,500,000
Ռուսիոյ մարդու կորուստը ճակատամարտի մէջ	420,000
Ճաբոնի մարդու կորուստը ճակատամարտի մէջ	170,000
Ռուսական մարտանաւեր կորսուած կամ զրաւուած հատ	73
Ճաբոնական մարտանաւեր կորսուած	» 12
Կորսուած ռուսական մարտանաւերու արժէքը	Տօլար 150,000,000
Ճաբոնական մարտանաւերու կորուստը Տօլար	15,000,00

ԹՂԹ ԱԿՑՈՒԹԻՒՆ

ՍՈՒԼԻՆԱ 7 սեպտ. 1905

Իմ նախորդ թղթակցութեամբ (տես թիւ 60 «Ռաւագը») խոստացած էի Սուլինայի հայ աշխատաւորներու գործադուլին հետեւանքին մասին գրել. ահա այսօր կը կատարեմ այդ խոստումս :

Օգոստոս 20 էն ի վեր գործադուլը կը շարունակուի գրեթէ : Վաճա-

ռականները թուլչայէն 20 բեռնակիրներ բերին : Այս նորեկ բեռնակիրները ուսէն, որոնք զօրքերուն հետ քանի մը թօն տուին ու փախան : Մեր հայերէն ոմանք իրենց չօրպա ձինները չը նեղացընելու համար դարձեալ սկսան քանի մը տեղ աշխատիլ, բայց մեծամասնութիւնը իր խօսքին վրայ հաստատ մնալով, մտիկ չըրին կառավարութեան եւ նաւահանգիստի վարչութեան սպառնալիքները եւ անիրաւ միջամտութիւնը ու չաշխատեցան եւ աշխատողներուն ալ արգելք եղան :

Նաւահանգիստի վարչութիւնը ամսոյս 3ին կրկին կանչեց հայ գործաւորները եւ պնդեց որ առջի վարձքով աշխատին, ասոնք դարձեալ մերժեցին : Այս մերժման վրայ՝ 3 հայեր զատեց իր գործադուլի պարագլուխ ու զրկեց կառավարութեան : Սա ալ այս 3 հայերն իբր խանգարիչներ՝ անցագիրներն առաւ որ աքսորէ : Այդ երեք հայերը լուր տուին թուրք հիւպատոսին որ զիրենք պաշտպանէ :

Հիւպատոսը տեղական կառավարութեան այս քայլը միջազգային օրէնքի դէմ բռնարարուած նկատելով, անմիջապէս դիմեց նաւահանգիստի վարչութեան եւ անկէ կառավարութեան : Հոն ոստիկանապետին հետ բաւական հակաճառեցան, բայց ելքը տակաւին չը յայտնուեցաւ :

Առ այժմ ուրախալի կէտը սա է որ Սուլինայի հայ գործաւոր դասակարգը մինչեւ այսօր կը շարունակէ իր պահանջին վրայ հաստատ մնալ, եւ բնաւ գործի ձեռք չը դարնէ : Այսօր հրեայ վաճառականի մը շոգենաւ եկած է որ անուխով լեցուի, բնաւ աշխատող չկայ, նաւը պարապ կը սպասէ : Վաճառականները իրար անցած են. հետեւանքը դեռ անորոշ է : Այս խնդրոյ վերջին ելքը կիմացնեմ :

Ե. Թ.

ԱԶԳԱՅԻՆ

Պոլսէն սեպտ. 8 թուականաւ Տէյի թէլեկրաֆի տրուած հեռագիր մը Կեսարիոյ եւ Սեբաստիոյ մէջ ջարդեր տեղի ունեցած ըլլալու լուրերը կը հերքէ, բայց կաւելցնէ թէ այս երկու քաղաքներուն մէջ, նոյնպէս Կարին եւ Սամսոն չփոթութիւններ պատահած են, եւ մահմետականներու գրգռումը հայոց դէմ կըրնայ աւելի ծանր դէպքերու երկիւղ տալ :

Մեր խմբագրականով յիշած ենք թէ Պատրիարքարանի եւ Պոլիս գտնուող 11 հայ եպիսկոպոսներու կողմէ երկու երախտագիտական եւ հաւատարմական ուղերձներ մատուցուած են Սուլիանին : Սա ալ աւելցնենք թէ Օրմանեան անձամբ չէ կըցած ներկայանալ Սուլիանին : Իսկ եպիսկոպոսներուն Վեհ. կաթողիկոսին ուղղած գրութեան մասին հետեւեալ տողերը կը կարդանք Արեւելքի մէջ :

Մայրաքաղաքս գտնուող ամբողջ

եպիսկոպոսները էջմիածնայ Ս. Հայրապետին դիմում ըրած են խնդրելու համար որ պէտք եղած յորդորները եւ յանձնարարութիւնները ըլլան արտասահման գտնուող վարդ մը յոռի եւ խռովարարական գաղափարներ տածող չարամիտ անձանց, որպէսզի ետ կենան իրենց այս եպիսկոպոսարաններէն : (.)

Խառգիւղցի հրեայ աղջիկ մըն ալ Պատրիարքարան դիմած է հայ եկեղեցւոյ գիրկը ընդունուելու խնդրանք : Իսկ անցեալ շաբթու մկրտուող եւ Սրբուհի կոչուող հրեայ աղջիկը, ինչպէս կուսհած էինք (անշուշտ մարգարէ ըլլալու պէտք չկար) որոշած է հայ երիտասարդի մը գիրկը ընդունուիլ : պսակը պիտի կատարուի յառաջիկայ շաբթու :

Սեւանիկի հայ եկեղեցւոյ անօթները, սկիհ, խաչ եւ ուրիշ արծաթեղէններ գողցուեր են : Ոստիկանութիւնը կը գողը փնտռէ եղեր :

Բաղէշցի Գասպար Մուրատեան երիտասարդը Գանտիայի մէջ յոյն աղջկան մը հետ նշանուելով, գիւղ մը գացեր եւ յոյն քահանայէ մը պսակուեր է : Տեղւոյն հայ քահանան բացատրութիւն ուղեր է մէթրաքօյի տէն, շատ իրաւամբ դիտել տալով թէ, պատրիարքարաններու միջեւ տիրող համաձայնութեան հակառակ վարուած են, տարբեր եկեղեցիի վերաբերող երիտասարդ մը առանց իր պատկանեալ հոգեւոր իշխանութեան հարց ու փորձին ենթարկելու պսակելը :

Թուլչայի մէջ օտարուհի մը հետ ապօրէն կենակցող հայ մը մեռած ըլլալով, թաղման կարգը կառարելու համար Պապատաղէն բերուած Տէր Աբիսողոմ քահանան կը մերժէ թաղել, բայց յետոյ Սուլինայի քահանան գալով, առանց իր պաշտօնակցի կարծիքը առնելու, կը կատարէ եկեղեցական արարողութիւնը ու կը թաղէ :

Այս երկու հայ քահանաներու զիրար հակասող ընթացքը թուլչայի մէջ գայթակղութեան տեղի տուած : Խնդիրը Պատրիարքարան տեղեկագրուած է : Տեսնենք Կրօն. ժողովը ինչ որոշում պիտի տայ :

Տփղիսի մէջ վերսկսած է հրատարակուիլ «ՆՈՐ-ԴԱՐ» օրաթերթը վեց սիւնակի վրայ եւ ճոխ պարունակութեամբ :

Բաժնեգիրն է մինչեւ դեկտ. 31 քսան ֆր.

Հասցէն՝
ԽԱՔԱԳՐՈՒՄԻՆ «ՆՈՐ-ԴԱՐ»-ի
(Կովկաս) Թիֆլիս

Ա. Զ. Դ.

Գուլէժական-երիտասարդ մը որ ընթացաւարտ եղած է նաեւ Ամերիկեան բարձրագոյն վարժարանէ մը, իր պարապ ժամերուն տրամադիր է մասնաւոր դասեր տալ Անգլիէիէն :

Պայժաններու մասին խմբագրութեանս գիմել :

ՀԱՎԱՏԻՍԱԹ

ԹԻԻՐՔԻԱ

Հիւքիւմէթ եէնի եէնի պոմ-պալար վէ տինամիթլէր պու-մագ պէհանէսի իլէ էրմէնիլէ-րին էվլէրինի, խանլարը վէ օ-թէլլէրի եօգլայուպ բէք չօգ քիշիլէր տէրտէսթ իթմէքտէ տիր :

Սթանպօլըն Պէյ օղլու ճիհէ-թինտէ պիր էվլին գուլուսընտան շիշէլէրլէ տինամիթ եախօտ մէ լինիթ պուլմուշ վէ պու սէ-պէպլէ չօգ քիշիլէր տէրտէսթ-լէ հապս իթմիշ : Բէգա Բրից-քէր նամ ալման օթէլինի բօ-լիսիա իհաթէ իտէրէք, օրատա շիւբհէլի եէտի քիշի պուլմուշ պուլարը էրմէնի գօմիթէլէրի-նէ շէրիք ատտ իտէյօր :

Բօլիսիա էրմէնի գօմիթալարը թարափընտան եէնի գօմբլօ զու-հուր իտէպիլիլ տէյու եհալիի շիւբհէլէնտիրմէքտէ, վէ գօր-գուլմագտա, վէ պու թէվա-թուրար իլէ իսլամ ճանիլէրի էրմէնիլէրէ գարշը պիր նէվ թահրիգ իթմէքտէ պուլընիյօր :

—Սթանպօլտան պա թէլէկրաֆ պիլտիրիլտիկի իւզրէ, իւզմիրէ եագըն պուլընան Սթանպօլա շէհ-րինտէ պիր էրմէնի խանէսինտէ 18 ատէտ պօմպա պուլընմըշ, պու սէպէպլէ օրատա վէ իգ-միրտէ պիր չօգ էրմէնիլէր մահ-պուս իտիրիթտէն մատա, չէքք ու շիւբհէտէն խալի օլան ֆագաթ պաշլընա մէյուլիլէթի օլմա-յան էրմէնիլէրի քէնտի տօղ-տուգլարը մէմլէքէթլէրինէ եօլ-լանըլմագտա տըրլտր : Գասիմէր Սթանպօլա քիշիլէր նամ պիր էնէնպի տախի տէրտէսթ օլընմըշ վէ պու էրմէնի գօմիթէլէրին ընէյիսի ատտ օլընարագջ Սթանպօլա եօլ-լանըլմըշ տըր :

—Սթանպօլտան ալընան սօն թէլէկրաֆա պինտէն, Պէյօղլու ճիվարընտա քեաին պէօյիւք աս-քէր գըշլալընըն ալթընտա կէօ-եա պիր լալըմ պուլընմըշ վէ տէրուինտէ զուպարալար տի-զիլի իմիշ : Թէքրար պու պէհա-նէ իլէտէ պիր թագըմ իշէիլէր վէ էրմէնիլէր տէրտէսթ օլընմըշ-լար : Պիլթիւն բաթթալթտա տէհշէթ հիւքմ իթմէքտէ տիր :

—Վէյ Բօշրա նըն մուսպիրի աթիւտէքի թէլէկրաֆը վէրմիշ տիր :

Էրմէնիստանտա պուլընան գօնսօլուարըն ըաթօրթլարը էր-մէնիլէրին աշվալինի բէք թէհ-լիքէտէ կէօթէրիյօրլար : Տէր-սիմին Բիւրտ աշիլէթլէրի վահ-շիանէ զատարըլըլարա պաշ-լալմըշլար : քէգա էրզրուտա էր-մէնիլէր գըրկընտան գօրգարագ մուհաֆազա օլընմագ իշիւն մէ-թէրիլէր (պատնէշ) եաթմագտա տըրլար : էրմէնի Բաթրիգի երլ-

տըզա կիտուպ, պէյանը սատա-գաթլէ Սուլթանըն տըգդաթընը վէ հիւմայէսինի իսթիրհամ իթ-տի :

—Արնապուտարըն վէ թիւք ասքէրլէրին կէյէն հաֆթա Սըրպ օինօրընա թէհալիլլէրի սէպէպ-լէ Սերպիա էլիսի Պապը Ալիյէ բրօթէսթ իթմիշ իտի : Ինկիլիզ կազէթալարըն պէյանը իւզրէ, սըրպ հիւքիւմէթի թիւքիւյա պիր իւլթիմաթօմ վէրուպ, թիւք զապիթլէրին թարտ օլընմալա-րընը, զարարտիտէ օլանլարա թագմինաթ էօտէնիլմէսինի վէ թիւք հիւքիւմէթինին աֆիլ իսթիրհամ էյլէմէսինի թալէպ իթմիշ, վէ պու շարթլարա իք-թիֆա վէրլիլմէգ իտէ Սերպիա տախի շէտիտ թէտպիրլէրէ միւ-րտնաթ իթմէլէ մէհպուր օլա-նաղընը պիլտիրմիշ տիր :

—Արապ ասըլարտան Սանաա-նըն եէնիտէն մուհասէրէ իտիլ-տիկինէ տալիլ օլան հալատիս էլան թաստիգ օլընմամըշ տըր : Տիկէր թարաֆտան, թիւք մէն-պալարընա նազարէն, Նէհէտ է-միրի իպըն Սէուտ թիւք գօ-մանտանը իլէ ուզլաշուպ, Նէհէտ էյալէթինտէ Սուլթանըն հա-քիմիլէթինի թանըմայա ըաղի օլմուշ ըմըշ :

—Սթանպօլ 10 սեպտ.—Տէրսիմ Գիւրտէրին էրզրում էրմէնիլէ-րի իւզէրինէ պէօյիւք գըրկըն-լար վէ եաղմալար իճրա իթմիշ օլընգլարը պիլտիրիլիյօր :

—Եըլտըլտաքի թահգիգաթ գօմիսիօնըն ընէյիսի Նէհէպ Մէլ-համէ բաշտըն զանըն իւզրէ, Սթանպօլտա էրմէնի իսթիլալը-նըն ընէյիսի Բիզրալիլիլ կազէ-թասընըն մուհարրիլէրինտէն Լեւոն Չէրէշեան ըմըշ պու գաշ-մըշ տըր :

Իշիտիլտիկի իւզրէ ազ վագըթ էվլէլ շիշէլէր տօլու խալը տինամիթ կէօմիրէք մէօհիլլէ-րի իլէ Սթանպօլա կէլմիշ :

—Գրօսքէր օթէլինտէ պուլը-նան ալման մուսպիրի Միկի իսրաճ օլընտը, Պագաթ Եըլտըզ գօմիսիօնը Էլթրօրալըլարըն տա-խի էրմէնի անարշիլթլէրինէ շէրիք պուլընտըզլարընա ըսրար իթմէքտէ տիր :

—Միւշիլ Զէյիլ բաշանըն ի-շարը իւզրէ, Եէմէն էյալէթին-տէ իւշ շէհիլլէր իթաաթ իթ-միշլէր պիր չօգ ասըլար թէս-լիմ օլընմըշլար :

—Մաքէթինիանըն թաշլընա սանճաղընտա [Էէնի բաղար] Լու-մա շէհրի ճիվարընտա ըսեան զուհուրա կէլմիշ օլընտընտան, միւթասարըֆ ասքէր իսթէմիշ իտէտէ, Սթանպօլտան միլալիմա-նէտալրանմագ իշիւն թալիմաթ վէրիլմիշ տիր :

Պուտարէլթտէն պիր թէլէկը-րաֆ Աստրիա Եէնի բաղար սանճաղընը զատթ իթմէք իշիւն

ասքէր եօլլայաճագ տէմիշ տիր : Պու հաիտիս Բօմատան թէքպիպ օլընլօր :

Տ Ա Խ Ի Լ Ի Է

Ինկիլթէրա բարըման օգա-լարընտան վէ սապըգ նազըր-լարընտան Մ. Ճէյմս Պուայս գէվ-ճիսի իլէ պէրապէր Սօֆիայա կէլմիշ տիր : Մ. Ճէյմս Պուայս պիր գաշ հաֆթա էվլէլ Մաքէ-թինիալը կէզուպ, օրանըն աշ-վալինի շախսէն թէտգըգ էյլէ-միշ տիր :

Մ. Ճէյմս վիւքէլա ընէյիսի Մ. Բայօ Բէթրուլլէ վէ Էքսարքլէ գօնսօլու վասիթասըլիլէ կէօրիւշ-միւշ տիր :

—Պուկարիտա պուլընան Մաքէթինիալը գօմիթէ ընէյի-լէրի վէ հէր թարաֆտան նասպ օլընան մուրախասլար թէհէմմիւ օլընուպ, Մաքէթինիալար ընմ շէթալարըն հաշարաթընա գար-շը թէտպիրլէր իլէ ալմագ, վէ իքի Պուկար—Մաքէթինիա գօ-միթէլէրինի պիրլէշտիրմէք, եա-խտ պէլինլէրինտէ իթիլաֆ հա-սըլ իթմէք իշիւն միւզէքէրէ ի-տէյօրլար :

Կ Ա Վ Կ Ա Ս Ի Ա

Պագու իսթիլալաթընա խի-թամ վէրմէք մագսէտի իլէ վա-րանցով—Տաշըով պիլզաթ Պա-գույա կիտուպ, թաթարլարըն վէ էրմէնիլէրին իշթիքեալարը-նը տինլէտիքտէն սօնրա, հէր իքի թարաֆըն մուրախասլարընը քէնտի ընէյասէթի ալթընտա մէհլիսէ տալէթ իթմիշ վէ օ-րատա ասայիշին իպգասը իշիւն շու շարթլարը գարարա ալմըշ տըր : « Պուլտան սօնրա վուգու պուլան ճինայէթլէրտէն զուհու-րա կէլէհէք զարար վէ զիյանը թաղմին իթմէք իշիւն էրմէնի վէ իսլամ մուրախասլարը շախ-սէն վէ մալէն զամին օլանագլար վէ թէմինաթ իշիւն նագըտ ագճէլէր տէրօղիթ իտէհէքլէր : Իքինճի իքի թարաֆ մուրա-խասլարընտան միւրէքէպ պիր հէյէթի հաքէմէ (իրարաւական ատեան) թէշքիլ օլընաճագ, վէ պու հէյէթ թարաֆէյինին միւնա-զաա սէպէպլէրինի թէտգըգ վէ մուհաքէմէ իտէհէք վէ իթի-լաֆ հուսուլա կէթիլէհէք տիր : Թէհէմմիւ օլընտն իքի թա-րաֆ մուրախասլարը գօնթ Տաշ-քովըն թէհէսիրի սայէսինտէ իս-թիլալ թէսքին օլընտըլընտան տօլալը պիր թէշէքիւրնամէ իմ-զալատըլար :

—Տաշքով Թիֆլիսէ ալտէթ իթտի :

—Պագու 12 սեպտ.—Տիւն էր-մէնիլէր վէ թաթարլար պէլին-լէրինտէ սուհնամէ իմզալատը-

լար : —Շամախտա տախի իսլամլար էրմէնի մահէլլէսինէ հիւնու-մ իթմիշլէր : Ասքէր եօլլանըլմըշ տըր :

Մ Ի Ի Թ Է Ն Է Վ Ի Է

Աթինտա պուլընան Բուճան-իա էլիսի վէ մայէթ մէմուրլա-րը եօլա չըգմըշլար տըր : Նի-հայէթ իքի հիւքիւմէթին միւ-նասէպաթը թէհամը իլէ գաթ օլընմըշ տըր :

—Աստրիա իմբէրաթօրը Հուն-գարիանըն բարթի ընէյիսիլէին-տէն տէօրթ զաթ Վիէննայա տա-վէթլէ, իւլթիմաթում նէվին-տէն Հունգարիա իշիւն պաղը աղըր շարթլար թէքլիֆ իթմիշ Բարթի ընէյիսիլէրի իմբէրաթօ-րըն շարթլարը Հունգարիա է-հալիսի գապուլ իտէմէգ տէյուպ շէքիլմիշլէր : Իշպու վագաա իւ-զէրինէ Հունգարիա տա նիւմա-յիշլէր վէ իսթիլալ զուհուր ի-տէհէք կէօրինիյօր :

—Պիր Բուս մէմուրը Էլէվմ Լօնտրատա պուլընուպ, Բուսիա իշիւն եէնի տօնանմա եաթտը-մագ մագսէտի իլէ պէօյիւք ֆագ-րիգալար վէ շիւքէթլէր իլէ մուխապէրէտէ իմիշ : Իշպու եէ-նի տօնանմա իշիւն լաղըմ օլան ագճէի տախի Ինկիլթէրալան իսթիգրազ իտէհէքլէր զանն օ-լընլօր :

ԲՕՄԱԹԻՉՄԻ ԴԵՂ

Ոտքի, սրունքի, մէջքի, եւ վերջա-պոյ մարմնոյ որ եւ իցէ մասին մէջ յօդադաւ, քամի (եւլ ըմաթիլի) ու-նեցողներ պէտք է գործածեն մեք ըով գտնուած վանայ Մամոնը (եախըն) որուն օգտակարութիւնը կ'երաշխա-ւորենք եւ արդէն հազարաւորներու կողմէ փորձուած է : Եախին կրակին վրայ տաքցնելով փալցնելու է ցաւած տեղը : Ցաւը անհետանալէն վերջ եախին ինքնի-րէն կը փրթի առանց մարմնոյ վը-րայ վէրք կամ հետք թողնելու : Մէկ եախին կարելի է գործածել 3-4 տարի : Հասը կարծէ 2. 20 ֆր. եւ 3. 20 փոսթի ծախքով միաւեղ : Դիմել Ե. Կ. ՃԱՆԿԻԻԼԵԱՆԻ վառնա

ԿԸ ՓՆՏՈՒԻԻ

Բաղէշի իրուլթիլ գիւղացի Յակոբ Մ. Էրօեան (Ումրու մականունեալ) 35-37 տարեկան կարճահասակ էրդիւնա-գոյն եւ կապուտաշեալ անձը Պանգ Օթօմանի դէպքին ուս դեսպանատան պաշտօնէի մը հետ Պուլսէն կրէտէ մեկ-նած եւ յետոյ հոնկէ Բեդրեսպուրկ երթալով, բոլորովին զաղբոցուցած է իր յարաբերութիւնը իր ընտանի-քին ու ազգականներուն հետ : Իմացուած է թէ Ռուսիայի անցած է վերջերս : Ուստի կը խնդրուի իր հասցէն գիտցողներէ որ հաճին երկտո-ղով մը իմացնել խնդրութեանս :

Одговорились А. Курбетянъ
печатница Д. Тодоровъ и С.ко—Варна